## Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման էներգաարդյունավետ օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգում ներառված անհատական բնակելի տների կառուցման խոշորացված արժեքը

*(2014 թվականի մարտի 5-ի դրությամբ)*

| N/N | Բնակելի տան տիպը | Ընդհանուր մակերեսը [1] /քառ.մ/ | Ընդհանուր շինարարական մակերեսը [2] /քառ.մ/ | Օբյեկտի կառուցման խոշորացված արժեքը (այդ թվում՝ ԱԱՀ 20%) /հազ. դրամ/ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | բացառությամբ այլ շինարարական աշխատանքների [3] | այլ շինարարական աշխատանքների ներառմամբ |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 1 | **ԷԱ-3** (1 հարկանի, 3 սենյակ, նկուղով) | 107.7 | 242.1 | 61,662.87 | 66,520.26 |
| | հեռանկարային 2-րդ հարկ | 44.9 | 59.3 | 15,103.71 | 18,564.32 |
| 2 | **ԷԱ-4** (1 հարկանի, 4 սենյակ, նկուղով) | 148.6 | 304.3 | 77,505.21 | 82,837.87 |
| | հեռանկարային 2-րդ հարկ | 132.7 | 143.9 | 36,651.33 | 40,758.37 |
| 3 | **ԷԱ-5** (2 հարկանի, 5 սենյակ, նկուղով) | 197.0 | 343.5 | 87,489.45 | 93,121.63 |
| 4 | **ԷԱ-6** (2 հարկանի, 6 սենյակ, նկուղով) | 198.56 | 356.8 | 90,876.96 | 96,610.77 |
| 5 | **ԷԱ-2X4** (2 համակցված տուն, յուրաքանչյուրը՝ 2 հարկանի, 4 սենյակ, նկուղով) | 169.0 | 486.9 | 124,012.43 | 130,741.33 |

---

*[1] **Ընդհանուր մակերես**՝ բնակելի և օժանդակ (խոհանոց, միջանցք, լոգասենյակ, սանհանգույց) սենքերի, ներկառուցված պահարանների, լոջիաների, պատշգամբների, ծածկապատշգամբների, դարավանդների (տեռասա) մակերեսների գումար, որոնք հաշվարկվում են հետևյալ ցածրացնող գործակիցներով. լոջիաների համար՝ 0.5, պատշգամբների և դարավանդների համար՝ 0.3, ծածկապատշգամբների և սառը խորդանոցների համար՝ 1.0: հաշվարկում ներառված չեն նկուղային հարկի, ձեղնահարկի և ավտոտնակի մակերեսները:*

*[2] **Ընդհանուր շինարարական մակերեսը**՝ բոլոր հարկերի, այդ թվում՝ նկուղային և բնակելի ձեղնահարկի մակերեսների գումարը՝ արտաքին պատերի պարագծով:*

*[3] **Այլ շինարարական աշխատանքներ**՝ արտաքին հաղորդակցուղիներին (ջրատար, գազատար, էլ.մատակարարում) միացման շինմոնտաժային, տարածքի բարեկարգման ու կանաչապատման աշխատանքները:*

***Ծանոթություն.***

- Հաշվարկը կատարվել է «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների խոշորացված ցուցանիշներ» նորմատիվատեխնիկական փաստաթղթի և գնագոյացման նոր նորմերի և վերահաշվարկված շինմոնտաժային աշխատանքների մոտավոր ինդեքսների», ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N19-Ն հրամանի և ՀՀ կառավարության 23.06.2011թ. N879-Ն որոշման համաձայն:

Նշված արժեքի շրջանակներում նախատեսված են նաև բնակելի տան ներքին հարդարման բարելավված որակի աշխատանքներ՝ ՀՀ ներկրվող տեղական և արտասահմանյան արտադրության լավորակ շինանյութերի (լատեքսային ներկեր, մետաղապլաստե դռներ և պատուհաններ, սանտեխնիկական սարքեր, սարքավորումներ, կերամիկական սալիկներ, փայտյա մանրահատակ և/կամ լամինատ և այլն) կիրառմամբ:

- Բնակելի կառուցապատման օբյեկտների կառուցման խոշորացված արժեքը փոփոխական է, կրում է խորհրդատվական (կողմնորոշիչ) բնույթ և պայմանավորված է ընտրված տեղանքի կառուցապատման, տեղակայման պայմանների բարդության աստիճանով, ինչպես նաև ՀՀ դրամի արժևորման կամ արժեզրկման՝ շուկայական փոխարժեքային տատանումների չափով և այլն: